

ՀԱՅԿԱԿԱՆ ԷՊՈՍԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՇԵՐՏԵՐԸ

Ս. Հ. ՈՒՄԱՌՅԱՆ

«Սասնա ծռեր» էպոսի առաջին ճյուղի մասին հայագիտության մեջ կա մի տարօրինակ կարծիք՝ իբրև այն մ. թ. ա. VII դ. Ասորեստանի քաղաքական իրադարձությունների ազդեցության արդյունք է։ Նման կարծիքի հիմք է հանդիսացել Աստվածաշնչում տեղ գտած այն պատմությունը, որտեղ ասված է. «Ասորեստանի Սենեքերիմ թագավորի հայրամարտն որդիները՝ Սարասարը (Շարացեր) և Ադրամեելիքը փախան դեպի Արարատի երկիր»¹։ Մովսես Խորենացին իր պատմության առաջին գրքում ասում է. «Մեր քաջ նախնին, այս ինքն է՝ զՍանասարն, և ի սմանէ աճումն և բազմասերութիւն լեալ՝ լցին զՍիմն ասացեալ լեան»։ Իսկ երկրորդ գրքում նա ավերացնում է. «Եւ զՇարաշան ի տանէ Սարասարայ հաստատէ բղեաշխ մեծ և կուսակալ յարեմտից հարառոյ եղերս սահմանացն Ասորեստանի, առափն Տիգրիս գետոյ, գաւառս պարգեկելով զԱրձն և որ շուրջ զնովաւ և զլեանն Տաւրոս, որ է Սիմ, և զԿղեսուրն ամենայն»²։ Երկու մեջբերումներում պատմահայրը շեշտել է Սանասարին-Շարաշանին ենթակա տարածքը՝ Արձնիք նստանգը, որի մեջ էր մտնում Սասուն գավառը և որտեղ ձևավորվել է հայկական էպոսը։ Սարասար և Շարաշան հորջորջումը արդյունք է ս> շ հնչյունափոխության³։

Ս. Երեմյանը համոզված գրում է. «Սասնա ծռեր» էպոսում պահպանվել է Սենեքերիմի որդիների՝ Սանասարի և Ադրամեելիքի հիշատակը, որոնցից սերվել են էպոսի Մհերն ու Դավիթը»⁴։ Ս. Աբեղյանը էպոսի առաջին ճյուղի հնությունը տանում է մինչև մ. թ. ա. IX դ., «եբրեւոյն էր Սենեքերիմը, եբրեւոյն շարասարն սեպագրական տեքստերում կոչվել են տվել ասորեստանցոց դեմ»⁵։ Պետք է նշել, որ Սենեքերիմը մ. թ. ա. VII դ. թագավոր էր Գր. Խալաթյանցը, հակառակ իր այն ժամանակակիցների, որոնք պնդում էին, թե հայկական էպոսի հիմքը ասորեստանյան ծագում ունի, գրում է. «Մենք ոչինչ աստուրական և նույնիսկ բիբլիական չենք գտնում նրա մեջ»⁶։ Երկար տարիներ էպոսագիտությանը զբաղվող Գր. Գրիգորյանը խնդրո առարկային անդրադառնում է մարքսիստական դիրքորոշմամբ, հայկական էպոսում տեսնելով հասարակության շերտավորում. «Էպոսում շատ որոշակի արտացոլվում են նախնադարյան հասարակության երկու գլխավոր էտապների՝ մայրիշխանության և հայրիշխանության լատիսների հետքերը, և նախնադարյան հասարակության բազմաթիվ գծեր»⁷։

Որոշ հայագետներ հետաքրքրվել են Ասորեստանի թագաժառանգ Սարասարի անվան ստուգաբանությամբ։ Ըստ Հ. Սանտալճյանի՝ Սարասար անունը «համառոտված ներգալ-շար-ուսուր անունն է և նշանակել է՝ ներ-

¹ Աստվածաշունչ, Զորորդ գիրք թագավորաց, գլ. ԺԹ, 33—36։

² Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, Տիգրիս, 1913, I ԻԳ, II Ը, էջ 70, 116։

³ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. VI, Երևան, 1971, էջ 638, 690։

⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 427։

⁵ Ս. Աբեղյան, Ազգային վեպ (Մուրճ, 1889, էջ 1747)։

⁶ Гр. Халатяни, Журнал Министерства народного просвещения, М., 1881, с 53.

⁷ Գր. Գրիգորյան, Հայ էպոսագիտության պատմություն, Երևան, 1981, էջ 46։

գալը պատերազմի աստված»⁸։ Հ. Աճառյանի կարծիքով՝ «Սարասար անունը ասորեստանյան ծագում ունի, որն Աստվածաշնչում տառադարձվել է Sarasar, իսկ հունարեն թարգմանություն մեջ՝ Σαρσαρ»։ Ն. Ադունցը Սարասար անունը համարել է Ասորեստանի մ. թ. ա. VII դ. զորավար Նաբու-սար-էսարի անվան կրճատ ձևը։ Նա միացել էր թագաժառանգ Արադ-նինլիլի հետ, որի անունը ս. գրքում փոխվել է Ադրամելեք¹⁰։ Հարցի քննական պատմությամբ զբաղվողները հակված էին նույնացնելու հայկական էպոսի Սանասար և Ասորեստանի փախստական թագաժառանգի Սարասար անունները։ Քանի որ հայկական էպոսը ձևավորվել է Սասունի տարածքում, նրանք փորձել են տալ նաև տեղանվան ծագումը։ Մ. Աբեղյանի կարծիքով, Թովմա Արծրունու ժամանակ (IX դ.) Սասուն տեղանունը բացատրվում էր Սանասար անունից, որը հավանաբար XII—XIV դդ. ենթարկվել է ժողովրդական ստուգաբանության, կապվելով «Սասուն-ցասուն» իմաստի հետ, ցույց տալով շրջապատի համար սասունցոց ահ ու սարսափ լինելը¹¹։ Պատմաբան Խ. Սամուելյանը, 1930-ական թվականների սոցիոլոգիզմի դիրքերից քննադատելով Մ. Աբեղյանին, հարցին մոտենում է դասակարգային պայքարի տեսանկյունից։ «Մ. Աբեղյանի կարծիքը, — գրում է նա, — գտնում ենք անհամապատասխան, քանի որ այդ բերդի կառուցումը կապված էր միմիայն տիրապետող իշխանների հետ (Սանասար և Բաղդասար) ... և ուստի ժողովրդը ահ ու սարսափի զգացմունք են տածել դեպի այդ բերդը՝ կառուցող և իրենց վրա իշխող իշխանները»¹²։

Իրականում բնապաշտական հավատալիքներով ապրող հեթանոս հայերի մեջ Սասունի մեզալիթյան հուշարձանները կախարդական կառույցների տպավորություն են թողել, որից մարդկանց մեջ առաջացել է սարսափ ու Սասուն անվան «սասուն-ցասուն» կեղծ ստուգաբանությունը։ Մյուս կողմից, մ. թ. ա. VII—VI դդ. Ասորեստանի կյանքում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները, գահակալական կոիվները, արքայասպան որդիներին, ինչպես նաև դեպի Արարատի երկիր¹³ Բաբելոնի փոխարքա Բալ-տասարի (Բաղդասար) փախուստը հուշական ազդեցություն են թողել հայ էպոս ասացողների վրա։ Դրան ավելացրած հայկական Սարասան և ասորեստանյան Սարասար անվանանմանությունները, որի հետևանքով հայկական էպոսում թույլ են տրվել ժամանակավորեպ սխալներ։

Կարծում ենք, որ հայկական էպոսում Բաղդասար անունը հետագա հավելում է։ Հ. Աճառյանը տալիս է այդ անվան եբրայական ձևը՝ «Balat sas-sar, որը հունարենում Βαλ-αζαρ է, ըստ ս. գրքի՝ «Իշխան Բելայ», ըստ Գեսենիուսի՝ Balat-sur-usur պաղեսեա զկյանս արքայի» նշանակությամբ»¹⁴։ Նա նշում է նաև, որ հայերենում Բաղդասար անունը գործ է ածվել ԺԵ դարից¹⁵։ Էպոսում ասված է, որ Բաղդասար քաղաքը կառուցել է Բաղդասարը։ Իրականում Բաղդասար հիմնադրել է Արքասյան հարստության երկրորդ խալիֆ Մանսուրը՝ VIII դարում¹⁶։ Փաղաքանունն իրականապես ծագում ունի, բարձր «աստված», որդի՝ «տվեց», այսինքն՝ «աստվածատուր»։

Մեր ժամանակներում էպոսագիտությունը ստացել է նոր որակ։ Ֆրանսիացի էստսագետ Ժ. Դյումենիլը եկել է այն համոզման, որ հնդեվրոպական ծագումով էպոսներին հատուկ էր երկվորյակությունը։ Հայկական էպո-

8 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 390։

9 Նույն տեղում։

10 Ն. Ադունց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 129—130։

11 Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպ, Թիֆլիս, 1908, էջ 48—49։

12 Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. II, Երևան, 1941, էջ 315։

13 А. О п с н е й м. Древняя Месопотамия. М., 1990, с. 69, 150.

14 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 375։

15 Նույն տեղում։

16 Энциклопедический словарь, М., 1953, с. 129

սի հիմնադիրներ Սանասարն ու Բաղդասարը նույնպես երկվորյակներ էին¹⁷, իսկ Գ. Գրիցների կարծիքով՝ հնդեվրոպական ժագումով էպոսների հերոսներին հատուկ էր ջրածին լինելը: Ըստ նրա՝ կախարդական ջրի ծնունդ են հայկական Սանասարն ու Բաղդասարը, հնդկական Նարան և Նարաշանսան, կելտական Կոնխոբարն ու Կոնխուլինը¹⁸ և այլն:

Հայկական էպոսի Մուշի տարբերակում ասված է.

Դաս հադ ախճիգ ըր հիդ գերթան,
էլան կացին ծովի քնար.
Ախճիգ լվաց զուր քիթ-պերան,
Շաք լամ էրգու ճուրը չը խմից-
Ասդձու հրամանով էրգուհոգովցավ:
Մնաց ինն ամիս, ինն օր թըմմավ-
էղավ ուրին էրգու դըգա.
Մեզ Սանասար, մեզ Բաղդասար¹⁹:

Սանասարն իր էպիկական գործողություններով նման է հնդկական Վրիթրային, Վերջինիս նման Սանասարը սպանում է ջրի հատակի վիշապին և աղատում երկրի ու երկնքի ջրերը: Մարութները հնդկական էպոսում անձրևաբեր աստվածներ են: Մարութա նաստվածը լճի փորքում Սանասարին տալիս է հրեղեն ձի և թուր Կեծակին: Նա ջրհորից հանում է նաև Դավթին²⁰, Մարութա աստծու անունն է կրել Սասունի Մարութա սուրբ լեռը: Ժողովրդական կեղծ ստուգաբանությամբ Մարութա լեռնանունը կապվում է Մարութա ասում է Ասլիմելիք, տարոնցի Կրպոն՝ Աբամելիք, ալաշկերտցի Թորոյանը՝ Ագնամելիք, Մարտունու բարբառում՝ Ալիմելիք է, իսկ մի անհայտ պատմող Սանասար և Աղրամելիք անունները փոխել է՝ Սինամ Քերիմ և Արդըլ Քերիմ²¹, Հետագայում Աղրամելիք անունը էպոսում փոխվել է Բարելունի մեկ այլ փախստական փոխաբառ Բաղդասարի անունով:

Հայկական էպոսի առաջին ճյուղի հերոսներ Մովսիսարն ու Սանասարը իրենք են թելադրում իրենց ջրային ժագումը: Էպոսի հին տարբերակներում Սանասարի ձիու անունը եղել է «Հրեղեն», բայց հետագայում զուգահեռաբար գործ է ածվել պարսկերենից փոխառված նոր անուն՝ Զալալ: Նրա ջալա հիմքը նշանակում է «փայլ», «շողողուն»²², որը համարվել է «հրեղեն» ածականին: Ի. Օրբելու կարծիքով՝ «Սանասարը իր հրաշք ծնունդով կապված է հնագույն դիցաբանության հետ, իր մեջ մարմնավորելով կոսմիկական դժեր, բնության ուժերի նշաններ, նրա կենդանարար, արգասավորող տարերքի՝ ջրի հետ»²⁴:

17 Ж. Дюмезиль, Верховные боги индоевропейцев, М., 1986, с. 49, 157.

18 Г. А. Грициер, Древнеиндийский эпос, М., 1974, с. 215.

19 Սանա ծոբ, Երևան, 1977, էջ 104:

20 Ս. Ա. Հյան, «Սանա ծոբ» հայկական էպոսը և հնդեվրոպական երեք ֆունկցիաները (Պատմա-բանասիրական հանդես, 1985, № 1, էջ 32—45):

21 Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. I, Երևան, 1978, էջ 72:

22 Սանա ծոբ, էջ 252, 497:

23 Б. В. Миллер, Персидско-русский словарь, М., 1950, с. 245.

24 Ի. Ա. Օրբելի, Սասունցի Դավիթ, Երևան, 1939, էջ XII:

Հստ Գ. Ղափանցյանի՝ Մովինար անունը կազմված է ծով և նար նախադիմբերից, որտեղ նար մասը աքքսդական փոխառություն է, nag նշանակում է «գետ», իսկ Nargu «ջրի աստվածություն»²⁵։ Հ. Աճառյանը այդ անունը հստմարել է «փայլակ» բառից առաջացած, որը լեթերես կազմված է հայերեն ծով + nag արաբերեն «հուր», «կրակ» բառերից։ Մովինար անունը գործ է ածված ժե-ժե դարերում²⁶։

Մովինար անվան նար մասը ոչ թե աքքսդական կամ արաբական փոխառություն է, ինչպես կարծել են անվանի հայագետները, այլ հնդեվրոպական ծագում ունի՝ nag նշանակում է «ուժ», «կյանքի ուժ», «հերոս», «բանակ», «հրաշք ուժ» (աստված)²⁷։ Այդ հիմքից են կազմված խեթերեն inna-ruatar և հին հնդկերեն Sunrta «կյանքի ուժ», Ավեստայում hunara «հրաշք ուժ», հունարեն αὐτὸς «տղամարդ»²⁸ բառերը և այլն։ Nag-ը և tⁿ ընդլայնող հնչյունը իդանդերենում տվել են nert՝ «բանակ», իսկ օսերենում՝ nart՝ «բանակ» և «ծողովուրդ»²⁹։ Մյուսիքի, Արարատի և ուրիշ բարբառներում նույնպես նար մարդ նշանակում է «ուժեղ մարդ»։ Բացի այդ, հնդեվրոպական ժողովուրդների մեջ գոյություն են ունեցել ուժ մարմնավորող աստվածներ, ինչպես՝ իդանդական Նյորդը, գերմանական Ներթուս դիցուհին³⁰, հնդկական Նարաշանաս՝ «հերոսների փառք» աստվածությունը³¹, խեթական բանակի հովանավոր և վերապաքալ դիցուհի Ինարան³², հունական բնության ուժերը մարմնավորող աստվածությունները՝ ներոյուհիները, ծովերի հովանավոր դիցուհին՝ Ներեսը³³, հայերի «ծովի ուժ» կամ «ծովի ոգի» Մովինարը։

Կարծում ենք, որ Սարասան անունը ջրային ծագում ունի։ Անվանահիմքը՝ հնդեվրոպական *ser/*sreu-ն, նշանակել է «հոսել», «շարժվել», «հեղեղ»։ Այդ արմատը ածանցների համակցությամբ հնդեվրոպական լեզուներում կարող է տալ զանազան ձևեր³⁴, ինչպես՝ հնդարիականում Saras «հոսող» և *Uetor «ջուր» բառակազմությամբ ստացվել է և՛ դետի, և՛ նրա հովանավոր դիցուհու Sarasvati անունը։ Նրան Ռիգվեդայում նվիրված են բազմաթիվ հիմներ³⁵, Դիցուհին մարութների՝ անձրևաբեր աստվածների տոհմից էր³⁶։ Հյուսիս-արևմտյան Հնդկաստանում Սարասվատին համարել են իրանական ջրանուն, որն Ավեստայում հիշատակված է Hara-hvati ձևով³⁷, Դա համոզիչ է, որովհետև S>h հնչյունափոխությունը հատուկ էր իրանական լեզուներին։ Այդ մասին Ա. Մեյեն գրում է. «Հայերենում, հունարենում և հին պարսկերենում S>h հնչյունափոխությունը ցույց է տալիս հնդեվրոպական շրջանի բարբառային մի փաստ»³⁸, Այսպիսով՝ նա-

25 Գր. Капанцяп, Хайаса—колыбель армян, Ереван, 1947, с. 220.

26 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 573.

27 Т. В. Гамкрелидзе, Вяч. В. С. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, с. 190.

28 Նույն տեղում։

29 Т. В. Абаев, Историко-этимологический словарь осетинского языка, т. II, М., 1973, с. 125. 177.

30 Т. В. Гамкрелидзе, Вяч. В. С. Иванов, նշվ. աշխ., էջ 190, 528.

31 Ригведа, М., 1989, с. 759; Мифы народов мира, т. II, М., 1982, с. 198; Ж. Дюмезиль, նշվ. աշխ., էջ 169.

32 В. Н. Хачатрян, Восточные провинции хеттской империи, Ереван, 1971, с. 23.

33 Դիցարանական բառարան, Երևան, 1985, էջ 167, 172; Платон, Сочинения в 3 томах, т. III, М., 1970, с. 555.

34 Э. Г. Туманян, Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978, с. 219.

35 Ригведа, с. 440—443, 551; Ж. Дюмезиль, նշվ. աշխ., էջ 133.

36 Ф. Б. Я. Кейпер, Труды по ведийской мифологии, М., 1986, с. 160—162.

37 Мифы народов мира, т. II, с. 409.

38 Ա. Մեյեն, Հայադիտական ուսումնասիրություններ, Երևան, 1979, էջ 68.

խաճայրենիքից Հնդկաստան անցած արիացիները հնդկերենում պահպանել են Սարասան նախկին անունը: Հիբրայի, հնդեվրոպական *Saras հիմքը, հայերենում ստանալով ան ածանցը, անվանակազմվել է Սարասան, որը, ինչպես տեսանք, Մ. Խորենացու մոտ Շարաշան է: Այդ ածանցից են անվանակազմվել Միհրան, Տիրան, Վահան և ուրիշ անձնանուններ: Անշուշտ, Սարասանը հեթանոս հայերի մեջ զետեղի հովանավոր աստվածություն էր, բայց հետագայում անձնավորվել ու դարձել է էպոսի զլխավոր հերոսներից մեկը, պահպանելով իր նախկին ջրային ծագումը: Սարասան անունը Բ և Ը հնչյունների դրափոխությամբ է դարձել Սանասար: Այս անունից տեղանուն կազմվելու ան ածանցը փոխարինվել է օվն-ի, ստանալով Սանասուն: Նման վերջածանցով Հայաստանի հնագույն տեղանուններից են՝ Օձունը, Տաշտունը, Կանիունը և այլն: Սանասուն անունը, իր հերթին համառոտվելով, ստացվել է նախ Սանսուն, ապա Սասուն ձևը: Սանասունը Բ հոգնակերտով կոչվել է Սանասունը: Սխալ է Թ. Արծրունին, կարծելով, թե Սասուն անունն ասորեստանյան ծագում ունի և նրա բնիկները՝ սանասնայք, ասորեստանցի ռամիկներ են, որոնք Սանասարի փախուստից հետո եկել են տա-րածքաշրջան³⁹:

«Սանա ծոեր» էպոսը իր սկզբնավորումից ի վեր կապված է եղել հայ ժողովրդի կազմավորման գործընթացի հետ: էպոսը յուրաքանչյուր ժողովրդի մշակույթի ամենաազդեցիկ դրսևորումն է, Հեգելի խոսքերով ասած: «Ազգային էպոսը սերտորեն կապված լինելով իրականության հետ, իր գործողություններով դրսևորում է ազգային բնավորությունն ու նրան հատուկ բոլոր կողմերը և նրա պաշտոնականը»⁴⁰: Եթե Սանասարն ու Բաղդասարը ազգությամբ հայեր չէին, ապա ինչպես պիտի էպոսում դրսևորեն ազգային բնավորության բոլոր կողմերը: Այս հարցում անհեթեթ է հնչում փոխառությունների դպրոցի ներկայացուցիչների այն կարծիքը, թե հայկական էպոսի սկզբնավորողները մ. թ. ա. VII դարի Ասորեստանի Սենեքերիմ արքայի հայրասպան որդիներն են եղել: Խնդրո առարկայի ռեսումնասիրությունը մեղ բերեց այն համոզման, որ ազգային էպոսի առաջին ճյուղի հիմնադիրներ Մովսիսարն ու Սարասան-Սանասարը իրենց անվանածագումներով և ղիցաէպիկական գործողություններով կապված են եղել ջրա-պաշտ հնդեվրոպացիների ղիցաբանական էպոսի շերտերին:

ИНДОЕВРОПЕЙСКИЕ СЛОИ АРМЯНСКОГО ЭПОСА

С. О. УМАРЯН

Р е з ю м е

Имя Санасар из армянского эпоса «Давид Сасунский» вследствие орфоэпического сходства часто путают с упоминаемым в Библии именем наследника ассирийского престола Сарасаром (VII в. до н. э.). Имя Санасар—это метатеза имени Сарасар, которое у Моисея Хоренаци звучит как Шарашан. Индоевропейская основа этого имени Saras, что означает «текущий», или «река». Таким же способом образовано и название священной индийской реки и имя ее покровительницы Sarasvatī. Цовинар и Санасар из эпоса «Сасунские безумцы»—оба имеют водное происхождение, и происхождением своих имен и своими мифологическими действиями они связаны со слоями мифологического эпоса почитающих воду индоевропейцев.

³⁹ Թ. Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 68:

⁴⁰ Г. В. Ф. Гегель, Эстетика, т. III, М., 1971, с. 444.